

ԿԱՐԾԻՔ

Մարի Եղիայի Ղազարեանի «Հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի համահարաբերակցությունը մանկավարժական կոլեկտիվում» վերտառությամբ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Մարի Ղազարեանի «Հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի համահարաբերակցությունը մանկավարժական կոլեկտիվում» վերտառությամբ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեզը գիտական հետաքրքրություն է ներկայացնում և պահանջված հետազոտություն է: Ատենախոսությունը լիբանանյան հայ իրականության մեջ առաջին աշխատանքն է, որը ուսումնասիրում է մանկավարժական կոլեկտիվում դրսևորվող հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի համահարաբերակցությունը: Աշխատանքում վեր են հանվել սոցիալական կարծրատիպերի և հուզական ինտելեկտի համահարաբերակցությունն ու փոխկապվածությունը, ինչպես նաև արձանագրվել և բացատրվել են հուզական ինտելեկտի բարձր արտահայտվածության ազդեցության ներքո սոցիալական կարծրատիպերի նվազ դրսևորումները:

Աշխատանքի արդիականությունը հիմնավորված է համոզիչ և բազմակողմանի: Հեղինակը իրավացիորեն ընդգծում է, որ ժամանակակից կրթական համակարգում հուզական ինտելեկտի դերը առանցքային է ոչ միայն մասնագիտական արդյունավետության, այլև սոցիալական փոխհարաբերությունների, հանդուրժողականության և ներառական կրթական միջավայրի ձևավորման տեսանկյունից: Հատկապես արժեքավոր է հետազոտության իրականացումը լիբանանյան հայ կրթական իրականության մեջ, որտեղ սոցիալական, մշակութային և պատմական գործոնները նպաստում են սոցիալական կարծրատիպերի ձևավորմանն ու պահպանմանը: Նման ուսումնասիրությունը մինչ օրս համակարգված կերպով չի իրականացվել, ինչը աշխատանքին տալիս է նորարարական բնույթ:

Ատենախոսությունն առանձնանում է տեսական ամուր հենքով: Հեղինակը մանրամասնորեն վերլուծել է հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի վերաբերյալ դասական և ժամանակակից տեսությունները՝ հենվելով ճանաչված հեղինակների (Դ. Գոուլման, Պ. Սալովեյ, Զ. Մայեր, Հ. Թեջֆել, Կ. Բրեյլի և այլք)

աշխատությունների վրա: Տեսական վերլուծությունը տրամաբանական է, համակարգված և նպաստում է հետազոտության հայեցակարգային ամբողջականությանը:

Փորձարարական հատվածը կառուցված է գիտականորեն հիմնավորված մեթոդաբանությամբ: Կիրառված են ինչպես ստանդարտացված, այնպես էլ հեղինակային հարցարաններ, որոնք համարժեք են հետազոտության նպատակներին և խնդիրներին: Տվյալների մշակումը իրականացվել է ժամանակակից վիճակագրական ծրագրերի (SPSS, Microsoft Excel) կիրառմամբ, ինչը ապահովում է արդյունքների հավաստիությունն ու վստահելիությունը:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ լիբանանահայ մանկավարժական միջավայրում բացահայտվել և վերլուծվել է հուզական ինտելեկտի մակարդակի և սոցիալական կարծրատիպերի դրսևորման միջև առկա փոխկապակցվածությունը: Հատկապես արժեքավոր են այն եզրահանգումները, որոնք ցույց են տալիս, որ հուզական ինտելեկտի բարձր մակարդակը նպաստում է սոցիալական կարծրատիպերի նվազմանը, հանդուրժողականության և կարեկցանքի բարձրացմանը:

Ատենախոսության գործնական նշանակությունը բարձր է: Աշխատանքի արդյունքները կարող են կիրառվել ուսուցիչների վերապատրաստման ծրագրերում, հոգեբանական թրեյնինգներում, ինչպես նաև կրթական քաղաքականության մշակման գործընթացում: Առաջարկված վերապատրաստման ծրագիրը կարող է ծառայել որպես արդյունավետ գործիք մանկավարժների հուզական ինտելեկտի և բարեկեցության բարձրացման համար, ինչը հատկապես կարևոր է հետճգնաժամային կրթական միջավայրում:

Ատենախոսը կատարել է մեծածավալ հետազոտական աշխատանք և հանգել այն եզրակացության, որ մանկավարժների մոտ հուզական ինտելեկտի բարձր արտահայտվածությունը ազդում է սոցիալական կարծրատիպերի թույլ դրսևորման վրա: Ամենաերկար դասավանդած և մեծ փորձ ունեցող ուսուցիչներն ունեն ամենաքիչ հանդուրժողականությունը մյուսների նկատմամբ և ամենացածր կարեկցանքի մակարդակը: Հետևաբար, այն ուսուցիչները, ովքեր աչքի են ընկնում ամենացածր սոցիալական հմտություններով, ցույց են տալիս ամենացածր հանդուրժողականությունը այլոց նկատմամբ՝ կախված սեռից, մասնագիտությունից կամ տարիքից:

Ատենախոսությունն ունի հստակ կառուցվածք, բաժինների միջև պահպանված է տրամաբանական հաջորդականությունը: Լեզուն գիտական է, հստակ և մատչելի, տերմինաբանական ապարատը՝ ճշգրիտ: Աղյուսակներն ու վիճակագրական տվյալները նպաստում են արդյունքների ընկալելի ներկայացմանը: Ատենախոսության հիմքում դրված է օտարալեզու թվով 138 մասնագիտական աղբյուր:

Աշխատանքը նվիրված է մանկավարժական կոլեկտիվում հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի փոխհարաբերության ուսումնասիրությանը, որը ժամանակակից կրթական և սոցիալ-հոգեբանական գիտության առաջնահերթ խնդիրներից է: Լիբանանահայ կրթական միջավայրի ընտրությունը թեմային հաղորդում է առանձնահատուկ գիտական արժեք:

Ատենախոսությունը լիբանանահայ իրականության մեջ առաջին համալիր հետազոտություններից է, որն ուսումնասիրում է հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի փոխկապակցվածությունը մանկավարժական կոլեկտիվի համատեքստում՝ լրացնելով տվյալ ոլորտում առկա գիտական բացը:

Հետազոտությունը կառուցված է ամուր տեսական հիմքի վրա և իրականացված է համարժեք մեթոդաբանական մոտեցմամբ: Կիրառված մեթոդներն ու մեթոդիկաները ընդհանուր առմամբ համապատասխան են առաջադրված նպատակներին և խնդիրներին, իսկ տվյալների մշակումը՝ վիճակագրորեն հիմնավորված:

Լիբանանի հայկական մի շարք կրթական հաստատություններում իրականացված հետազոտությունը ապահովում է արժեքավոր էմպիրիկ տվյալներ, որոնք թույլ են տալիս բացահայտել ուսումնասիրվող երևույթների առանձնահատկությունները կոնկրետ սոցիալ-մշակութային միջավայրում:

Աշխատանքի արդյունքները ունեն հստակ գործնական ուղղվածություն և կարող են կիրառվել ուսուցիչների վերապատրաստման, հոգեբանական աջակցության և կրթական ծրագրերի կատարելագործման գործընթացներում՝ նպաստելով կրթական միջավայրի արդյունավետության բարձրացմանը:

Ատենախոսության դրական կողմերին և արժանիքներին անդրադառնալուց հետո, նշենք նաև որոշ դիտարկումներ, որոնց վերաբերյալ կարևորում ենք ատենախոսի կարծիքն ու մեկնաբանությունները.

1. Աշխատանքի եզրակացությունները հիմնականում բխում են առաջադրված հետազոտական խնդիրներից և արտացոլում են իրականացված տեսական ու էմպիրիկ աշխատանքի արդյունքները: Այնուամենայնիվ, որոշ եզրակացություններ ունեն

կերպումների ճշգրտման և առաջադրված խնդիրների հետ առավել հստակ համապատասխանեցման անհրաժեշտություն: Մասնավորապես ցանկալի կլիներ, որ բարաքանչյուր եզրակացություն առավել ակնհայտ կերպով կապվեր համապատասխան խնդրի կամ վարկածի հետ, ինչը կուժեղացներ աշխատանքի ներքին տրամաբանական ամբողջականությունը:

2. Աշխատանքում արժանի ուշադրությամբ քննվում է ապրումակցման (եմպատիայի) հիմնախնդիրը՝ որպես հուզական ինտելեկտի կարևոր բաղադրիչ: Միաժամանակ կարելի է նշել, որ հոգեբանական տեսանկյունից ապրումակցման գործընթացը հաճախ փոխկապակցված է անձի պաշտպանական մեխանիզմների հետ, որոնց շարքում առանձնահատուկ բազային նշանակություն ունի պրոյեկցիայի հոգեբանական մեխանիզմը: Վերջինս կարևոր դեր է խաղում այն գործընթացում, որի միջոցով անհատը ընկալում և «վերագրում» է սեփական հուզական ապրումները մյուսին: Այս համատեքստում ցանկալի կլիներ անդրադառնալ ապրումակցման և պաշտպանական մեխանիզմների փոխազդեցությանը, ինչը կարող էր հարստացնել հետազոտության տեսական մեկնաբանությունները:

3. Հեղինակը հիմնավորում է, որ հայալեզու զրականության մեջ թեմային ուղիղ առնչվող ուսումնասիրությունները սակավ են: Այնուամենայնիվ, հնարավոր էր ներգրավել որոշ հարակից հայալեզու աշխատանքներ (մանկավարժական հոգեբանության, սոցիալական հոգեբանության ոլորտներից), որոնք կարող էին հարստացնել տեսական վերլուծությունը:

4. Թեև աշխատանքի տեսական հիմքը բավարար և հիմնավորված է, ցանկալի կլիներ սոցիալական կարծրատիպերի մշակութային պայմանավորվածության հարցը ներկայացնել ավելի լայն համատեքստում՝ ընդգրկելով սփյուռքահայ այլ համայնքների փորձը: Սա հնարավորություն կտար համեմատական վերլուծության միջոցով առավել ընդգծել լիբանանահայ իրականության առանձնահատկությունները:

5. Աշխատանքն իր բովանդակությամբ արդեն իսկ ենթադրում է սոցիալական կառուցվածքայնության և մշակութային բազմազանության փիլիսոփայական մոտեցում՝ ընդգծելով, որ սոցիալական կարծրատիպերն ու հանդուրժողականության ձևերը պայմանավորված են համայնքի մշակութային և սոցիալական առանձնահատկություններով: Ցանկալի կլիներ ատենախոսն այս մոտեցումն առավել մանրամասներ լիբանանահայ կրթական միջավայրի ուսումնասիրության համատեքստում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ատենախոսական աշխատանքը ամբողջությամբ համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին: Ներառում է արդիական գիտական խնդիր, ունի հստակ կառուցվածք, կիրառելի մեթոդաբանություն և գործնական նշանակություն:

Ինչպես բոլոր բարդ և զգայուն թեմաների ուսումնասիրության դեպքում, Մարի Եղիայի Ղազարեանի գիտական աշխատանքում ևս առկա են խորացման ուղիներ, սակայն դրանք չեն նսեմացնում կատարված աշխատանքի լրջությունը և չեն ստվերում Մարի Եղիայի Ղազարեանի «Հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի համահարաբերակցությունը մանկավարժական կոլեկտիվում» թեմայով ատենախոսության ընդհանուր կառուցվածքն ու գիտական արժեքը:

2. Մարի Եղիայի Ղազարեանի «Հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի համահարաբերակցությունը մանկավարժական կոլեկտիվում» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին և պատրաստ է հրապարակային պաշտպանության, իսկ հեղինակն էլ արժանի է իր իսկ հայցած հոգեբանական գիտությունների թեկնածուի ԺԹ.00.03 – Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ գիտական աստիճանին:

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Դոցենտ Ա. Ֆիրյանի ստորագրությունը հաստատում եմ

Գիտական քարտուղար



Ա.Ռ. Ֆիրյան

Ս.Ս. Իսախիրյան